

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՑՈՒԱԿԻ ՆԵՐՍԵՍՅԱՆ

**ՀԵՔԻԱԹՆ ԻՐԻԵՎ ՏԵՔՍ ԵՎ ԽՈՍՈՒՅԹ.
ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ, ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ
ՆՅՈՒԹԻ**

**Ժ.02.02 – «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

փ. գ. թ., դոցենտ Ն. Լ. Աբրահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**բ. գ. դ., պրոֆեսոր Լ. Գ. Բրուտյան
բ. գ. թ., դոցենտ Կ. Ռ. Միքայելյան**

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. օգոստոսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բ. գ. թ., դոցենտ Ն. Ս. Սիմոնյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Թեմայի արդիականությունը: Սույն աշխատանքում քննվում է համեմատաբար երիտասարդ գիտակարգի՝ տեքստի լեզվաբանության մի քանի հիմնահարց, շարադրված են համապատասխան հիմնարար դրույթները և կարգերը: Դրանց կիրառումն է հետագայում նպաստում աշխատանքի առանցքային վարկածներից մեկի ապացուցմանը՝ հեքիաթը յուրովի տեքստ է, և արդյունավետ է հեքիաթն իբրև տեքստ ներկայացնելը և ուսումնասիրելը:

Նշված վարկածը համահունչ է տեքստի լեզվաբանության նորագույն գաղափարին՝ ժանրի ավանդական վիճահարույց հասկացությունը փոխարինել «տեքստի տեսակ» հասկացությամբ՝ մշակելով տեքստի տարբեր տեսակներին բնորոշ տեքստային հատկությունները: Այդպիսով՝ մեր աշխատանքը հայ լեզվաբանության մեջ առաջին անդրադարձն է ժողովրդական հեքիաթին՝ տեքստի լեզվաբանության դիրքերից:

Ատենախոսության գիտական նորույթն են հայկական, ռուսական և անգլիական ժողովրդական հեքիաթը՝ իբրև որոշակի տեսակի տեքստ և խոսույթ դիտարկելը և ըստ այդմ ուսումնասիրելն ու ներկայացնելը՝ վերհանելով այդ հեքիաթների տեքստերի կազմությունը, պատումի ծավալման և ներկայացման միջոցները, դրանց ուղեկցող լեզվական երևույթները, հեքիաթի տեքստին հատուկ մի շարք առանձնահատկությունները, երեք ժողովուրդների հեքիաթներում կրկնվող լեզվական բանաձևերը, պատմողի և լսողի փոխհարաբերությունը:

Հայկական հեքիաթն առաջին անգամ ուսումնասիրվում է ռուսական և անգլիական ժողովրդական հեքիաթների համեմատությամբ. ուշադրության կենտրոնում են դրանց տեքստերի կառուցվածքային և լեզվական ընդհանրություններն ու տարբերությունները:

Հեքիաթի տեքստի կառուցի դրսևորման առումով բացահայտվել են հեքիաթի կառուցի «սյունները»՝ սկիզբը և վերջը մատնանշող լեզվական միջոցները՝ ցուցիչները, որոնք մինչ այժմ չէին ընդգրկվում տեքստի նշանների ցանկում: Այդպիսով՝ հարստացվում է տեքստի լեզվաբանության

այս կարևոր կարգը: Ցուցիչները բաժանել ենք երկու տեսակի՝ սկզբի/վերջի և անցման: Հեքիաթի նյութի հիման վրա ցուցիչները ներկայացրել ենք և՛ իմաստային, և՛ գործառույթային տեսակետից:

Աշխատանքում ի հայտ է բերված երկրորդ խմբի՝ անցման ցուցիչների խորքային գործառույթային կապը տեքստի մեկ այլ ընդունված նշանի՝ անդրտեքստի հետ:

Ատենախոսությունը կարող է նպաստել տվյալ բնագավառում տեսական և գործնական հետազա աշխատանքների իրականացմանը:

Առաջարկվել է տեքստի լեզվաբանությանը վերաբերող հայերեն եզրույթների ցանկ, որը կնպաստի մեզանում այս գիտակարգի հետազա զարգացմանը:

Աշխատանքի **նպատակն** է թեկնածուական ատենախոսության սահմաններում տալ հայկական, ռուսական և անգլիական ժողովրդական հեքիաթների տեքստային նկարագիրը՝ ցույց տալով, որ դրանք տեքստի միևնույն տեսակի ազգային տարբերակներն են:

Ըստ նպատակի՝ ձևավորվել են ատենախոսության մեջ լուծվող **խնդիրները**՝ ներկայացնել հեքիաթի տեքստի կառուցվածքի ընդհանուր բնութագիրը, վերհանել այն լեզվական միջոցները, որոնց օգտագործմամբ իրականանում է տվյալ կառուցվածքը, բացահայտել հեքիաթին բնորոշ տեքստի նշանները: Նկատի ունենալով հեքիաթի ստեղծման և գոյության հաղորդակցական բնույթը՝ հեքիաթը դիտարկվել է նաև իբրև խոսույթի յուրահատուկ տեսակ:

Ատենախոսության տեսական նշանակությունը:

Ատենախոսությունը տեսական նշանակություն ունի մասնավոր և ընդհանուր լեզվաբանության, ինչպես նաև հաղորդակցման ու խոսույթի տեսությունների համար: Այն ավանդական տեքստատեսակի լեզվաբանական քննության փորձ է՝ տեքստի լեզվաբանության նոր մոտեցումների կիրառմամբ: Ատենախոսությունը կարող է օրինակ ծառայել տվյալ ուղղությամբ հետազա ուսումնասիրությունների, նշված լեզուներով բանահյուսական տեքստերի զուգադրման ասպարեզում իրականացվելիք հետազոտությունների համար, ինչպես նաև օգտագործվել որպես

յուրօրինակ մեթոդաբանական ուղեցույց այլ տեսակի տեքստերի տեքստագիտական նկարագրության համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքը կարող է հիմք դառնալ տեքստի լեզվաբանության, համեմատական լեզվաբանության, թարգմանության տեսության, ինչպես նաև հեքիաթին նվիրված բանագիտական դասընթացների համար:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունը մեթոդաբանական առումով կառուցված է գիտական նկարագրության, վերլուծության և համեմատության մեթոդների կիրառմամբ՝ և՛ զուտ լեզվաբանական, և՛ նշանագիտական հայեցակետերի համադրությամբ: Հիմնական մեթոդը հեքիաթի տեքստագիտական վերլուծությունն է՝ հիմնված տեքստի լեզվաբանության ժամանակակից նվաճումների վրա:

Հետազոտության նյութը հայկական, ռուսական և անգլիական ժողովրդական հեքիաթներն են. ուսումնասիրել ենք Հայկական ՍՍՀ ԳԱ, հետազայում՝ ՀՀ ԳԱԱ հրատարակած Հայ ժողովրդական հեքիաթների I-XVI հատորներում, Ա. Ղանալանյանի և ԵՊՀ կազմած ժողովածուներում ներառված հայկական, Ա. Ն. Աֆանասևի կազմած երեք հատորներում հավաքված ռուսական և Զ. Զեքըբսի հրատարակած երկու հատորներում գտնված անգլիական ժողովրդական հեքիաթները:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, եզրույթների ցանկից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության բովանդակությունը: Ներածության մեջ համառոտ ներկայացվում է հեքիաթի՝ որպես տեքստի քննության տեսական հիմքը, նշվում են աշխատանքի նպատակը, հետազոտվող նյութի սահմանները, բացահայտվում այն խնդիրները, որոնց լուծմանը ցանկանում ենք ձեռնամուխ լինել: Հակիրճ անդրադարձ կա վերջին տարիներին Հայաստանում և Ռուսաստանում հեքիաթին նվիրված լեզվաբանական աշխատանքներին: Ներածության մեջ ներկայացված են թեմայի հրատապությունը, դրան անդրադառնալու հիմնական շարժառիթները:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Տեքստի լեզվաբանության մի քանի խնդիր», քննվում են համեմատաբար նոր գիտակարգի՝ տեքստի լեզվաբանության կարևոր նվաճումները: Այդ նպատակով ուսումնասիրվել են տարբեր հեղինակների՝ Ի. Ռ. Գալպերինի, Վ. Ա. Լուկինի, Ն. Ա. Բելովայի, Վ. Ն. Տոպորովի, Տ. Մ. Նիկոլանայի, Վ. Ե. Չերնյավսկայայի հիմնարար աշխատությունները, որոնցում մշակված են տեքստի լեզվաբանության հիմնական հասկացություններն ու կարգերը: Կարևոր նշանակություն են ստացել տեքստի սահմանումներ տալու ընթացքում բացահայտված տեքստայնության հիմնական կարգերը, մասնավորապես՝ ինքնահասկանալիությունը (Գալպերին, Լուկին):

Հետաքրքրությունների կիզակետում է նաև տեքստերի տիպաբանության չափանիշների հարցը, որի հետ սերտորեն կապված է «տեքստի տեսակ» հասկացությունը (Չերնյավսկայա): Հատուկ ուշադրություն է դարձվում Տ. Ն. Դորոժկինայի առաջարկած տեքստի տեսակը որոշող «հարցաթերթիկին»:

Իբրև տեսական հիմք՝ ընդունել ենք նաև մեծանուն լեզվաբան Ն. Դ. Արուսյունովայի՝ խոսույթի տեսության համար հիմք ծառայած «Հասցեատիրոջ գործոնը» հոդվածի գաղափարները: Կիրառելով այդ տեսության հիմնարար դրույթները՝ հնարավոր է տեքստը ներկայացնել իբրև հաղորդակցություն և խոսույթ՝ ասողի և լսողի հաղորդակցական դերերով, վերհանել խոսքի հասցեատիրոջը խոսքային միջոցներով մատնանշելու եղանակները:

Հետագա շարադրանքում նախորդ հետազոտողների քննած որոշ հիմնահարցեր՝ տեքստի նշաններ, տեքստերի տիպաբանություն, խոսույթ, փորձարկել ենք հեքիաթի տեքստի վերլուծության ոլորտում:

Երկրորդ գլուխը, որը կրում է «Հեքիաթի տեքստի բնորոշման հարցեր» վերնագիրը, հեքիաթի տեքստի բուն ուսումնասիրությունն է: Վ. Ա. Լուկինը, առաջարկելով «տեքստի նշաններ» կարևորագույն հասկացությունը, իբրև տեքստի նշաններ դիտարկում է ինքնահասկանալիությունը, միջտեքստայնությունը, վերնագիրը, անդրտեքստը, բնաբանը, գրաշրջությունը: Դրանցից առանձնացրել ենք մեր աշխատանքի համար առավել կարևոր մի քանիսը՝

միջտեքստայնությունը, վերնագիրը, անդրտեքստը, կենտրոնացել դրանց ուսումնասիրման վրա: Բացի այդ՝ հաշվի առնելով հեքիաթի տեքստի այն առանձնահատկությունը, որ հեքիաթն ունի սկզբի և վերջի ակնառու բանաձևեր, ուսումնասիրել ենք դրանք «ցուցիչ» անվան տակ (թարգմանաբար օգտագործել ենք Յու. Նայդայի և Չ. Թեյբրրիի “marker” եզրույթը): Սկզբի/վերջի, ինչպես նաև հեքիաթում հանդիպող անցման ցուցիչներն ընդգրկել ենք տեքստի նշանների թվում՝ զարգացնելով Լուկինի համապատասխան տեսությունը:

Ուսումնասիրելով հեքիաթին բնորոշ տեքստի նշանները՝ նկատել ենք, որ նույն լեզվական արտահայտությունը կարող է միաժամանակ տեքստի մի քանի նշան լինել: Օրինակ՝ սկզբի և վերջի ցուցիչները կարող են ունենալ միջտեքստային բնույթ, այսինքն՝ լինել մեջբերում, այլ տեքստի օգտագործում, իսկ վերջի ցուցիչները հաճախ կրում են նաև անդրտեքստային գործառույթ, ինչպես նաև առկայացնում են խոսողին և լսողին: Վերհանված են ցուցիչների տարբեր իմաստները և գործառույթները:

Անդրադառնալով Լուկինի կողմից տեքստի նշան համարվող միջտեքստայնության երևույթին՝ նկատել ենք, որ այն յուրովի է դրսևորվում հեքիաթի տեքստում. հեքիաթի մեջբերումները ճանաչելի են, բայց չունեն կամ կորել է դրանց սկզբնաղբյուրը, բացի այդ՝ հնարավոր չէ դատել դրանց գիտակցվածության աստիճանի մասին: Մեջբերումը չափազանց հատկանշական և կարևոր է հեքիաթի տեքստի համար, իհարկե, ոչ գրավոր տեքստին բնորոշ ձևով: Մեջբերումները հեքիաթից հեքիաթ կրկնվում են: Օրինակ՝ երեք ժողովուրդների հեքիաթներին չափազանց բնորոշ և կրկնվող է օտար տարածքի տիրոջ խոսքը, երբ նա զգում է հեքիաթի հերոսի ներկայությունը.

«Մի քիչ հ'անցավ, Հուրի թաքավորի ախչկերքն էկան:

- Հը՛, էս ի՞նչ իսանի ֆոտ ա գալի ըստեդ:
- Ա՛յ քու տունը շինվի,- ասեց կիրակուր էփողը,- մենք իսան ենք՝ մեզնից ա գալի:
- Չէ, դարիբ մարթի ֆոտ ա գալի:
- Գլխներդ վկա՛ չէ՛» («Օհան ղընչպարի տղի հեքիաթը», ՀԺՀ ԳԱՀ, հ. 1, N 8):

"Фу-фу-фу! Прежде русского духу слыхом не слыхано, видом не видано; нынче русский дух на ложку садится, сам в рот катётся" ("Иван Быкович").

"Fee-fi-fo-fum,
I smell the blood of an Englishman,
Be he alive, or be he dead,
I'll have his bones to grind my bread" ("Jack and the Beanstalk").

Հեքիաթում առկա են ժողովրդական բանահյուսության այլ ժանրերից «մեջբերումներ»՝ ասացվածքներ, հանելուկներ, առակներ, երգեր: Ուշագրավ է, որ հայկական հեքիաթներում բազմաթիվ են այլ լեզուներով մեջբերումները: Նաև ամենաէական երևույթը հեքիաթի համար իրեն բնորոշ կառույցի վերարտադրումն է, որը կապվում է տեքստի տեսակի խնդրի հետ:

Լուկինի ուսումնասիրած հաջորդ տեքստի նշանը՝ վերնագիրը, հեքիաթի դեպքում խիստ պայմանական է, քանի որ հեքիաթները հաճախ վերնագրել են գրառողները: Որպես հենց հեքիաթի վերնագրի առանձնահատկություն՝ նշվում է, որ շատ վերնագրեր մեկ այլ տեսակի տեքստ են, օրինակ՝ ասացվածք կամ թևավոր խոսք. հայկական հեքիաթներն ունեն նման վերնագրեր՝ «Աստու պահած գառը գելը չի ուտի», «Հում կաթնակերին էյթիբար չկա» և այլն:

Լուկինի կողմից որպես տեքստի նշան հիշատակված անդրտեքստը բացահայտել ենք նաև հեքիաթի տեքստում: Թեև հեքիաթի ողջ տեքստը նկարագրում է տեքստից տարբերվող իրականություն, սակայն այն հաճախ ներառում է նաև բուն պատումին ուղղված արտահայտություններ: Ընդ որում՝ անդրտեքստն օժտված է որոշակի գործառույթներով, դրա միջոցով, օրինակ, կատարվում է պատումի թեմայի ֆոկլորի փոփոխություն:

Անդրտեքստային արտահայտությունները միավորել ենք մի քանի խմբում: Հեքիաթի տեքստին ամենաբնորոշը ասույթի թեման կամ թեմայի

Ֆոկլուն առանձնացնող արտահայտություններն են, օրինակ՝ «Նազիրվէզիրը թօղ նստի ջղացպան, խօսկը տանք թաքավօրին» («Թաքավօրն ու նազիրվէզիրը», ՀԺՀ ԵՀՀ, N 3) նախադասությունը:

Առանձնացրել ենք ևս մեկ անդրտեքստային երևույթ. այն անդրտեքստային է, քանի որ հայկական և ռուսական հեքիաթներում ներառում է «հեքիաթ» բառը և դրա ռուսերեն համարժեքը, իսկ անգլիական հեքիաթներում՝ “to tell” պատում ստեղծելու գործողությունն անվանող բայը. այդպիսի արտահայտություններն ունեն լրացուցիչ, խիստ անսովոր և կարևոր իմաստ՝ մատնանշում են պատումի ժամանակի և իրական ժամանակի չհամընկնելը, որը, իհարկե, առնչվում է նաև հեքիաթի քրոնոտոպի հետ, օրինակ՝ “Скоро-то сказка сказывается, а дело-то не скоро делается”: Սրա նմանակն է անգլիական հեքիաթի “Farther than I can tell you tonight or ever intend to tell you” արտահայտությունը:

Անդրտեքստային արտահայտությունները տեքստի կապակցման միջոց են, ծառայում են լսողի ուշադրությունը տեքստի առավել էական հատվածներին հրավիրելուն, օգնում են կողմնորոշվել տեքստում. դրանք տեքստի «կազմակերպիչներն» են:

Վ. Ա. Լուկինը ցուցիչները որպես տեքստի նշան չի նկարագրել, ուստի ցուցիչների մեր ուսումնասիրությունն աշխատանքում առավել մանրամասն է: Ցուցիչները, ինչպես նաև տեքստի մյուս նշանները՝ վերնագիրը, անդրտեքստը, միջտեքստայնությունը, դիտարկել ենք որպես տեքստի բուն կառույցի ներկայացման և ընկալման կարևորագույն տարրեր:

Ցուցիչները, ըստ տեքստային դիրքի, բաժանել ենք երկու խմբի՝ սկզբի/վերջի և անցման: Սկզբի/վերջի ցուցիչները թեև մատնանշում են տեքստի սկիզբն ու վերջը, սակայն գրեթե միշտ ունեն նաև այլ գործառույթներ: Անցման ցուցիչները մասնակցում են տեքստի կազմակերպմանը:

Աշխատանքում ներկայացվում են հեքիաթի սկզբի/վերջի ցուցիչների էական հատկանիշները.

ա) Քանի որ սկզբի/վերջի ցուցիչները մենք ընդունում ենք որպես տեքստի նշան, հնարավոր ենք համարել դրանց վրա տարածել տեքստի

մեկ այլ նշանի՝ վերնագրի համար մշակված չափանիշը՝ տեքստի մեջ ունեցած դիրքը, այսինքն՝ դրանք հանդիպում են տեքստի սկզբում կամ վերջում:

բ) Որպես այլ հատկանիշ՝ դիտարկվել է սկզբի/վերջի ցուցիչների կայունությունը՝ լեզվի կայուն արտահայտությունների՝ դարձվածքների նմանությամբ: Նկատել ենք, որ հեքիաթի և՛ սկզբի, և՛ վերջի ցուցիչները կայուն են, բայց դրանց կայունությունը տարբեր բնույթի է: Այս հատկանիշը կարելի է դիտարկել՝ միայն հաշվի առնելով ցուցիչների ծավալը և կառուցվածքը. “Жити-быти”, «Լինում է, չի լինում», “Once upon a time” արտահայտությունները կայուն են, չլինելով ասույթ՝ չեն կարող լինել ամբողջական նախադասություն, դրանք պահանջում են շարունակություն, որն արդեն կայուն չէ. դա հեքիաթի վերագգային ընդհանուր հատկանիշն է: Դրանք նախադասություն դարձնող շարունակությունն ըստ երևույթին պետք չէ դիտարկել իբրև ցուցիչ: Մյուսները (միայն վերջի ցուցիչները) այլ բնույթի են. կայուն են իբրև շարահյուսական կառույց, իբրև միտք, սակայն ընդգրկում են փոփոխական տարրեր:

գ) Կարևորել ենք նաև սույն ցուցիչների՝ տեքստի տեսակը մատնանշելու ունակությունը, որը դրանք ձեռք են բերել դարերի ընթացքում:

Աղյուսակի ձևով ներկայացրել ենք երեք ժողովուրդների հեքիաթների այն ցուցիչները, որոնք օժտված են մեր առանձնացրած երեք հատկանիշներով (ցուցիչների փոփոխական մասն առանձնացված է շեղ տառատեսակով):

	Սկզբի ցուցիչ	Վերջի ցուցիչ
Հայկական հեքիաթ	Լինում է, չի լինում Ժուկով-ժամանակով	<i>Երկնքից երեք խնձոր ընկավ, մեկը պատմողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ ամբողջ աշխարհին: Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ</i>

		հասներ ձեր մուրազին:
Ռուսական հեքիաթ	Жили-были В <i>тридешатом</i> царстве, в <i>тридешатом</i> государстве	И я там был, мёд-пиво пил. Вот вам сказка, а мне <i>кринка масла.</i> И стали жить да поживать, и теперь <i>живут, хлеб жуют.</i>
Անգլիական հեքիաթ	Once upon a time	And they lived happy <i>ever after.</i>

Հատկանշական է, որ երեք ժողովուրդների մշակույթում հենց այդուսակում ընդգրկվածներն են հեքիաթի ամենաճանաչելի բանաձևերը՝ իբրև հեքիաթի տեքստին բնորոշ տարրեր:

Ցուցիչների համակարգված ուսումնասիրության շրջանակում կատարվել է նաև դրանց իմաստային վերլուծություն, որից բխում է հետևյալը. հեքիաթի սկզբի/վերջի ցուցիչների համար պարտադիր է տեքստի կազմությանը մասնակցելը՝ ընդգծելով տեքստի և ոչ տեքստի (երբեմն՝ երկու տեքստերի, երբ գործ ունենք «տեքստ տեքստում» երևույթի հետ) սահմանները, տեքստի տեսակը մատնանշելը, դրանք նաև կարող են ունենալ լրացուցիչ, տարբեր բնույթի իմաստներ: Օրինակ՝ ակնհայտ է, որ ա) «նրանք հասան իրենց մուրազին», բ) «դուք էլ հասներ ձեր մուրազին» հատվածներն իմաստաբանորեն տարբեր են. «ա»-ն սյուժեի տարր է, իսկ «բ»-ն առկայացնում է բանավոր հաղորդակցության լսողին: Նույնանման է անգլերենի ցուցիչը. ա) “and if they didn't live happy for ever after”, բ) “that's nothing to do with you or me”, այն տարբերությամբ, որ ասացողն առկայացնում է և՛ իրեն, և՛ լսողներին:

Ցուցիչները կապվում են մեր ուսումնասիրած գրեթե բոլոր հարցերի հետ. ցույց են տալիս տեքստի սահմանը, տեղի ու ժամանակի անորոշությունը, այդ ձևով՝ նաև իմաստային սահմանը, տեքստի տեսակը, ասողին ու լսողին: Հեքիաթի պատումի գրեթե բոլոր տարրերը խորքային կապի մեջ են միմյանց հետ: Այդպիսով՝ ցուցիչները շաղկապվում են

«տեքստի» նման խրթին հասկացության բնորոշման հետև և նոր կշիռ ստանում:

Հեքիաթի տեքստի տեսակը որոշելու համար կիրառել ենք նաև Մ. Մ. Բախտինի հայտնի քրոնոտոպի գաղափարը՝ իր լեզվական դրսևորումներով, նկատել ենք հեքիաթի տեքստին հատուկ մի քանի առանձնահատկություն: Նախ՝ հեքիաթի սկզբն ու վերջը համընկնում են պատումի սկզբին ու վերջին, հեքիաթը չունի ժամանակային շփոթ կամ ժամանակային շրջադասություն, հեքիաթի համար կարևոր են ժամանակային դրսևորում ունեցող «հանկարծ», «հենց» և նման հասկացություններ, իսկ «օր» կամ «ժամ» ժամանակի ընթացքի բնորոշումներն ավելի շատ հորինվածքային՝ իրադարձությունները շաղկապող բնույթ ունեն, քան ժամանակի չափման միավորի:

Հեքիաթի տարածությունը միասեռ չէ. այն բաղկացած է մի քանի տեսակի «աշխարհներից» ու վայրերից, էական են նաև դրանց մեջ եղած սահմանները և սահմանների անցման կանոնները: Սահմանների անցման վայրերն են «ջրհորը», «ծխնելույզը», «դուռը», «շենը» և այլն: Հեքիաթի քրոնոտոպի կարևոր հասկացությունն է «ճանապարհը»՝ իրեն հատուկ այլ «վայրերով»՝ «խաչմերուկ», «աշխարհի ծայր»:

Երրորդ գլխում, որը կրում է «Հեքիաթն իբրև խոսույթ (ասողի/լսողի դերեր)» վերնագիրը, առանձին ուսումնասիրության առարկա է հեքիաթն իբրև խոսույթ, քանի որ այն բանավոր հաղորդակցության յուրովի տեսակ է: Հեքիաթի տեքստը թույլ է տալիս ակնհայտ կերպով տարանջատել հեղինակին և պատմողին (նարատոր), քանի որ հեղինակը կոլեկտիվ է, իսկ պատմողը՝ անհատ, որը հեքիաթի և առհասարակ բանահյուսության բնորոշ գիծն է: Հեքիաթի պատմողի նկատմամբ կիրառելով դասակարգման հայտնի երեք չափանիշ՝ դիեգետիկ/ոչ դիեգետիկ, բացահայտ/ոչ բացահայտ, ամենագետ/սահմանափակ գիտելիքներով պատմողներ (քանի որ հենց դրանք ենք համարում իմաստավորված հեքիաթի պատմողի համար), նկատել ենք հետևյալը.

ա) Հեքիաթի պատմողը ոչ դիեգետիկ է, նրա պատումն իր մասին չէ, այլ հեռու ժամանակներում ապրած մարդկանց, թեև որոշակի

դեպքերում նա դիեգետիկ է, այն էլ՝ պատմության երիզող մասերում, օրինակ, երբ ասում է, թե մասնակցել է հեքիաթի հերոսների հարսանիքին:

Վերը ասվածի բացառությունն է ռուսական՝ հարսանիքով ավարտվող հեքիաթների մի մասը, որոնցում պատմողը մասնակցում է այդ խնջույքին, յուրովի դեր է կատարում հեքիաթի պատումի կառուցվածքում: Այն պատկանում է ինչպես պատմվող սյուժեին, այնպես էլ պատմողի կյանքի դրվագներին (“И я там был, мед-вино пил, по усам текло, во рту не было; подали белужины – остался не ужинавши” (“Королевич и его дядька”)): Այս տեսակի ավարտը կտրուկ տարբերվում է այն դեպքերից, երբ պատմողը սոսկ վարձատրություն է պահանջում լսողներից: Սա մնում է սյուժեից դուրս, տարբեր իրականությունները չեն միանում:

բ) Հեքիաթի պատմողը նաև ոչ բացահայտ է, թեկուզ հենց այն պատճառով, որ հեքիաթը չի պատմվում առաջին դեմքով: Հեքիաթի պատմողը ողջ պատումի ընթացքում բացահայտ չէ, սակայն պատումի որոշ մասերում, հատկապես՝ ավարտին, դառնում է բացահայտ պատմող՝ խոսքն ուղղելով անմիջականորեն իր ընկալողին (նարատատոր), օրինակ՝ “Вот вам сказка, а мне кринка масла”, «Երկնքից իրեք խնձոր վեր ընկավ, մինն ասողին, էրկուսն էլ հանկաջ դնողին», “And if they didn't live happy for ever after, that's nothing to do with you or me”:

Հեքիաթի պատմողը նաև պատումում կարող է իրեն ներկայացնել, օրինակ, որոշ ընդունված հնարքներով իրար **կապելով** պատումի մասերը. “Скоро сказка сказывается, да тихо дело делается” (“Хитрая наука”), «Շատ կերթա, քիչ կերթա, ինքն ու աստված գինան, կը հասնի մեծ ծովի մե» («Ասլանգաղես ու Ջանփոլաղ», ՀԺՀ ԳԱՀ, հ. X, N 13), **դատողություններով**. “If she had been a good little old Woman, she would have waited till the Bears came home, and then, perhaps, they would have asked her to breakfast; for they were good Bears — a little rough or so, as the manner of Bears is, but for all that very good-natured and hospitable. But she was an impudent, bad old Woman, and set about helping herself” (“The Story of the Three Bears”), ընկալողին ուղղված **հարցերով**. «է՛յ, քյո միտք կուզյա՛մ էն աղջիկ, որ թողուցիք ձկան փոր» («Մարգրտաշար», ՀԺՀ ԳԱՀ, հ. XVI, N 1) և այլ ձևերով:

գ) Հեքիաթի պատմողը ոչ հետևողական կերպով տատանվում է ամենագետ/սահմանափակ գիտելիքներով պատմողի դիրքերի միջև՝ մերթ հավակնելով հերոսների ներքին մտորումներին տեղյակ լինելուն, մերթ հրաժարվելով նման հստակ գիտելիքներից ու ասելով՝ «Շատ են գնըմ թե քիչ, աստօժ գիդի» («Սինամ թագավորի հեքիաթը», ՀԺՀ ԵՀՀ, N 19):

Հեքիաթի պատումին բնորոշ են նաև առաջնային, երկրորդային և երրորդային պատմողները, այսինքն՝ պատմողը խոսքը տալիս է հերոսին, որը սկսում է իր պատումը, և դրա ընթացքում կարող է ի հայտ գալ նաև երրորդ պատմող:

Ընդ որում՝ երկրորդային պատմողը, ինչպես առաջնայինը, պատմությունը սկսում է հեքիաթին բնորոշ սկզբի ցուցիչներով՝ ձևավորելով պատմողների խոսքի սահմանները, որն ակնհայտ է դարձնում «տեքստ տեքստում» երևույթը: Լինելով բանավոր պատում՝ հեքիաթը ենթադրում է ավելի ակտիվ ընկալող, քան գրավոր ստեղծագործությունը: Հեքիաթի դեպքում ընկալողի բացահայտվածությունն ուղղակիորեն կապված է պատմողի բացահայտվածության աստիճանի հետ: Շատ հաճախ պատմողն ուղղակիորեն դիմում է իր ընկալողին. «Կերան-խմէցին, քառասուն զօր ու գիշեր հարսանիկ էրին, պասկեցին պզդիկ ախջգան, ուրախացան էդօնկ, էդպէս ուրախուտուն էղնի **ձէգ, էրէխաներ քան**» («Շայ-թամբալի պաղմուտուն» ՀԺՀ ԵՀՀ, N 40), «Մըեր էն սըրսարոտ, դաշանգյ Ղարաբադին Ղըզղալա շենին կյինան իրեք ստաքան լըցած ա, տիրած ստոլին, **եր կալիք, խմեցիք**, էս մին ստաքանը ստողին, էս մին ստաքանը լսողին, էս մին ստաքանն էլ էս հաքյաթնին լուս աշխարք քըցողին» («Կոզնի տըղան», ՀԺՀ, հ. V, N 5): “Ай потешить **вас** сказкой ? А сказочка чудесная, есть в ней и дива дивные, чуда чудные ...” (“Шабарша”),

Հաղորդակցման հասցեատիրոջ անկայացումը կարող է իրականացվել տարբեր եղանակներով. լսողի անկայացումը հաճախ կատարվում է հեքիաթի վերջի ցուցչի միջոցով (այդպես է երեք ժողովուրդների հեքիաթներում), ինչպես նաև ավելի նուրբ ձևով, այսպես՝ դրական հերոսները պետք է համապատասխանեն պատմողի և լսողների ընդհանուր գեղագիտական և բարոյական չափանիշներին, օրինակ,

կանանց գեղեցկությունը հայկական հեքիաթում հաճախ արևի լույսի է նմանեցվում. «Օխտը քիր, օխտն էլ թագավորի աղջիկ. ընենց էլ մի սի՛րուն, մի նա՛խշուն, որ արևին ասում են՝ դու մեր մտի, մենք դուս ենք գալի, ընենց մի սիրունիկ գաղեր են» («Ջան-փոլատ», ՀԺՀ ԳԱՀ, հ. II, N 3):

Ատենախոսությունն ավարտվում է հետազոտության արդյունքները սեղմորեն ամփոփող հետևյալ **եզրակացություններով**.

1. Սա հեքիաթի տեքստի առաջին ուսումնասիրություններից է հայ լեզվաբանության մեջ, քանի որ հեքիաթն ավանդաբար հետազոտվել է այլ գիտաճյուղերի սահմաններում: Տեքստագիտական ուսումնասիրության մեթոդները կիրառելով հեքիաթի նկատմամբ և այդպիսով ընդլայնելով դրանց գործածության դաշտը՝ լուծել ենք երկու խնդիր. մի կողմից՝ այդ մեթոդները փորձարկվել և արդարացրել են իրենց, մյուս կողմից՝ ավանդական նյութը ներկայացվել և քննվել է նոր մոտեցումների տեսանկյունից:

2. Աշխատանքում փորձ է արվել հեքիաթի տեքստը վերլուծել տեքստի լեզվաբանության միջոցներով: Ցանկացած տեքստ առանձնացնելու համար, մեր կարծիքով, ելակետային պետք է լինի տեքստի տեսակի կարգը: Տեքստի լեզվաբաններից շատերը գտնում են, որ այդ կարգը տեքստերի ուսումնասիրության տրամաբանական հիմքն է, և տեքստի տեսակը բացահայտվում է տարբեր տեսակի տեքստերի առանձնահատկությունները նկարագրելու միջոցով: Այս առումով հեքիաթն առանձնանում է իր տեքստին հատուկ, շատ կարծր, կրկնվող, իրեն ամրագրված զուտ տեքստային յուրահատկություններով: Դրա հետ մեկտեղ նկատելի են փոփոխական տարրեր:

3. Ժամանակակից տեքստի լեզվաբանության կարգերից ընտրելով և կիրառելով ամենակենսունակներից մեկը՝ տեքստի նշանները, որպես հեքիաթի տեքստի նշան՝ առանձնացրել ենք միջտեքստայնությունը, վերնագիրը, անդրտեքստային տարրերը. տեքստի նշան ենք դիտել նաև մեր կողմից մանրամասն մշակված հեքիաթի տեքստին բնորոշ ցուցիչները: Բազմաթիվ օրինակների վերլուծության հիման վրա նկատել ենք, որ տեքստի բոլոր նշանները յուրովի են դրսևորվում հեքիաթում, մասնավորապես մեջբերման (միջտեքստայնության գլխավոր երևույթի)

սկզբնաղբյուրն անհայտ է, այն կրկնվող է, իսկ վերնագիրը, որն առավելապես պայմանական է հեքիաթի դեպքում, երբեմն կարող է որոշակի կառուցվածքային դեր ունենալ: Ինչ վերաբերում է անդրտեքստին, ապա նորույթ է դրա բացահայտումը հեքիաթի տեքստում, ընդ որում՝ անդրտեքստը, որը նշանագիտորեն բարդացնում է հեքիաթի կառույցը, ներկայացվում է նաև գործառույթային տեսակետից. դրա միջոցով, օրինակ, կատարվում է պատումի թեմայի ֆոկուսի փոփոխություն:

4. Ցուցիչների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տեքստի այդ նշաններն իրենց ամենախորքային նշանակությամբ երկու տեսակի են. դրանց մի մասը տեքստակազմ է՝ ապահովում է տեքստի ներքին կապակցվածությունը (անցման ցուցիչներ), մյուս մասը, ունենալով տեքստակազմ հատկություն, հավելյալ ցուցում է նաև տվյալ տեքստի տեսակը (սկզբի/վերջի ցուցիչներ): Սկզբի/վերջի ցուցիչներն ամենաբնորոշն են հեքիաթին ու անմիջականորեն նշում են տեքստի տվյալ տեսակը: Այս երկու տեսակի ցուցիչները դրսևորում են իմաստային և գործառույթային տարբերություններ: Բացահայտված են սկզբի/վերջի ցուցիչների էական հատկությունները և ներկայացված այդ բոլոր հատկություններով օժտված ցուցիչները՝ երեք լեզուներով:

5. Անցման ցուցիչների դերը տեքստում տարբեր է: Սկզբունքորեն կարելի է տեքստ կազմել առանց դրանց մի մասի օգտագործման («կարճ ասած», «հա», «well», «итак»), սակայն մյուսները՝ դերանուններ, որոշ մակբայներ, ժամանակների համաձայնություն և այլն, անհրաժեշտ են գրագետ խոսք կառուցելու համար: Անցման ցուցիչները դրսևորում են մեկ այլ յուրահատկություն ևս. դրանց մի մասն «անտարբեր» է տեքստի տեսակի նկատմամբ և կարող է հանդիպել բազմաթիվ տեքստերում, մյուս մասը հատուկ է միայն հեքիաթին:

6. Հեքիաթի քրոնոտոպը դրսևորում է մի շարք առանձնահատկություններ՝ և՛ տեղի, և՛ ժամանակի, և՛ դրանց լեզվական արտահայտման առումով:

7. Հեքիաթի տեքստի՝ մեր ուսումնասիրած բոլոր տեքստի նշանները փոխկապակցված են. ցուցիչների իմաստն, օրինակ, կապված է

հեքիաթի մի շարք առանցքային հատկանիշների, մասնավորապես, հեքիաթի քրոնոտոպի հետ, քանի որ դրանք երբեմն ցուցում են տեղն ու ժամանակը: Մի շարք այլ դեպքերում հատկապես վերջի ցուցիչներն առկայացնում են պատմողին կամ հեքիաթի ունկնդրին:

8. Հետազոտության մեջ ներկայացված են և՛ տվյալ ժողովրդի հեքիաթներին բնորոշ լեզվական դրսևորումները, և՛ այն տարրերը, որոնք ընդհանուր են երեք ժողովուրդների հեքիաթների համար:

9. Մեր կարծիքով՝ կան հիմքեր հեքիաթն իբրև խոսույթ ներկայացնելու համար, եթե հաշվի առնենք հեքիաթի ստեղծման և գոյության բուն տարերքը՝ բանավոր հաղորդակցությունը: Տարբեր հիմքերով կատարված դասակարգման արդյունքում հայտնաբերել ենք, որ հեքիաթի պատմողը ոչ դիեգետիկ է, հիմնական հատվածում՝ ոչ բացահայտ, իսկ երիզող հատվածներում՝ բացահայտ, ոչ հետևողական կերպով տատանվում է ամենագետ/սահմանափակ գիտելիքներով պատմողների միջև:

Հեքիաթի հիմնական հատվածում պատմողը դիմում է ինքնաբացահայտման նուրբ և խորամանկ միջոցների, իսկ երիզող, առավելապես վերջին հատվածում ակնհայտորեն բացահայտում է իրեն՝ օգտագործելով առաջին դեմքի եզակի թվով դերանուն. դա վերաբերում է երեք ժողովուրդների հեքիաթներին: Լեզվական նյութի հիման վրա բացահայտվել են պատմողի ներկայության եղանակները հեքիաթի տեքստում, ասողի և լսողի տեսակների սկզբունքային կապը:

Պատմողը հեքիաթի տեքստում կարող է լինել առաջնային, երկրորդային, երբեմն՝ երրորդային, ինչի շնորհիվ ի հայտ է գալիս «տեքստ տեքստում» երևույթը:

10. Այսպիսով՝ մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ հեքիաթի տեքստի լեզվական առանձնահատկությունները հնարավոր չէ դիտարկել առանց տեքստի տեսակը, կառուցվածքը, տեքստի նշանները հաշվի առնելու: Հեքիաթի տեքստը միայն առաջին հայացքից է պարզ ու հասարակ, նշանագիտական տեսանկյունից այն ունի բավականին բարդ կազմություն. հեքիաթի տեքստի կառույցն օժտված է շատ լավ արտահայտված սահմաններով (դրանք այստեղ ուսումնասիրվել են

«սկզբի/վերջի» ցուցիչներ անվան տակ), բացի այդ՝ հեքիաթի տեքստը կարող է ունենալ հիմնական և երիզող ենթատեքստեր, որոնք ստեղծվում են առաջնային և երկրորդային պատմողների առկայության շնորհիվ: Ընդ որում՝ «շրջանակ» կառույցը, որն իրականանում է սկզբի/վերջի ցուցիչների օգտագործմամբ, կարող է դառնալ կրկնակի՝ հեքիաթի վերջում վերնագրի կրկնության, երբեմն նաև՝ մեծ հեքիաթին կցված ձանձրալի հեքիաթների շնորհիվ:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Շրջանակ կազմող ցուցիչները հայկական և ռուսական հեքիաթներում», «Էջմիածին», N 3, 2008, էջմիածին, էջ 97-108:
2. «Գրական հեքիաթի տեքստաբանական վերլուծության փորձ», «Գիտական հոդվածներ» (բանասիրություն), Վանաձոր, 2009, էջ 65-73:
3. «Հեքիաթի սկզբի և ավարտի ցուցիչներն իբրև տեքստակազմիչ նշաններ», Материалы. Межвузовская научная конференция посвященная 90-летию Ереванского государственного университета. Ер., 2009, էջ 111-115:
4. “Из наблюдений над сказочным хронотопом”. “Диалог, карнавал, хронотоп”, N 2 (42). Москва, 2009, сс. 91-95.
5. ««Սահմանի» հասկացությունը հեքիաթային աշխարհի նշանային համակարգում», «Կանթեղ», N 2 (43), Եր., 2010, էջ 78-88:
6. «Հեքիաթի տեքստի միջտեքստայնությունը և տեքստային նշանները», «Բանբեր Երևանի համալսարանի» (բանասիրություն), 141.2, Եր., 2013, էջ 32-37:

НЕРСЕЯН ТИГРАНУИ ЦОЛАКОВНА

СКАЗКА КАК ТЕКСТ И ДИСКУРС: НА МАТЕРИАЛЕ АРМЯНСКОЙ, РУССКОЙ И АНГЛИЙСКОЙ СКАЗКИ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02. 02 “Общее и сравнительное языкознание”.

Защита состоится 19-ого сентября 2016 года в 15:00 на заседании специализированного совета ВАК по Лингвистике 019 при Институте языка Национальной академии наук РА по адресу: Ереван, ул Григора Лусаворича, 15.

РЕЗЮМЕ

Работа посвящена текстологическому анализу армянской, русской и английской сказки.

Актуальность темы обусловлена текстологическим направлением исследования, поскольку лингвистика текста – сравнительно молодая научная дисциплина – еще слабо представлена в армянском языкознании.

Цель представленной работы - в рамках кандидатской диссертации дать лингвистическую характеристику типа текста, к которому принадлежит сказка вообще, представив народные сказки трёх народов как разновидности этого типа. **Материалом** анализа послужили армянские, русские и английские народные сказки, взятые из авторитетных изданий.

Теоретическая значимость работы состоит в том, что армянская сказка впервые описана как текст и дискурс, а также - поставлена в сопоставление с русской и английской сказкой с позиций современной лингвистики текста. **Практическая значимость** работы состоит в возможности использования её результатов для чтения курсов по лингвистике текста, теории перевода, сравнительной лингвистике, а также – может составить часть курса по фольклористике.

Диссертационная работа состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и списка терминов лингвистики текста на армянском языке в приложении.

В главе первой, озаглавленной «Некоторые проблемы лингвистики текста», излагаются основные достижения сравнительно молодой научной дисциплины - лингвистики текста. С этой целью анализируются основополагающие труды ведущих российских лингвистов И. Р. Гальперина, В. А. Лукина, Н. А. Беловой, В. Н. Топорова, Т. М. Николаевой,

В. Е. Чернявской и др., в которых были разработаны основные понятия и категории дисциплины. В центре внимания – попытки дать определение понятию текста, в ходе которых были выявлены категории текстуальности, в частности – автосемантия (Гальперин, Лукин). Основой для анализа сказки в качестве дискурса являются идеи выдающегося лингвиста, Н. Д. Арутюновой, изложенные в широко известной работе «Фактор адресата». Именно эти категории в дальнейшем использованы в диссертации для текстологического анализа и характеристики сказки.

Вторая глава – «Вопросы определения текста сказки» – собственно текстологический анализ сказки. Его основой является предложенная В. А. Лукиным категория – «текстовые знаки». Под последними у данного автора понимаются автосемантия, заглавие, интертекстуальность, метатекст, эпиграф, анаграмма. Из них нами выбраны некоторые, наиболее значимые для сказки как особого типа текста – заглавие, интертекстуальность, метатекст, дополненные нами ещё одним типом текстового знака – «маркёром» (маркёры были предложены как неперебиваемые текстовые организаторы Ю. Найдой и Ч. Тейбером). Маркёры подразделены нами на две группы – маркёры начала/конца и маркёры внутренних переходов. Маркёры обеих групп подвергаются системному анализу – выявлены и представлены как их семантика, так и функциональные характеристики. Все текстовые знаки сказки, по нашему мнению, многофункциональны и находятся в тесной связи.

В качестве дополнительного подхода, выявляющего особенности данного типа текста, использован всемирно известный концепт М. М. Бахтина – «хронотоп». Очевидно, что пространство-время сказки обладает некоторыми уникальными особенностями, в частности – «многомирностью», в связи с чем для сказки столь важны переходы границ между ними.

Третья глава озаглавлена «Сказка как дискурс (роли нарратора и наррататора)». В ней, применяя разработанные в немецкой школе нарратологии (Гамбург) самые существенные классификации нарратора и наррататора, мы проанализировали типы нарратора и наррататора сказки и выявили следующее: нарратор сказки а) недиегетический, в) имплицитный, с) непоследовательно колеблющийся между нарратором с ограниченными знаниями и нарратором всеведущим. Степень выявленности нарратора очевидным образом коррелирует с выявленностью наррататора. В сказках встречаются также первичный и вторичный нарраторы.

В заключении приводятся выводы, логически вытекающие из нашей работы.

TIGRANUHI Ts. NERSESYAN

**THE FAIRY TALE AS A TEXT AND DISCOURSE: ON THE MATERIAL OF
ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH FAIRY TALES**

The Scientific Degree thesis of a Philological Sciences Candidate, specialty
10.02.02, "General and Comparative Linguistics".

The defense of the thesis will take place on September 19, 2016, at 15:00 at
the session of the Specialized Council 019 "Linguistics" of the Supreme
Certifying Commission functioning at the Institute of Language by National
Academy of Sciences of RA (Grigor Lusavorich 15, Yerevan)

SUMMARY

The thesis is devoted to the textological analysis of the Armenian,
Russian and English fairy tales.

The relevance of the research is determined by the textological
aspect of the research since Text Linguistics which is a relatively new academic
discipline is not presented in Armenian linguistics sufficiently.

The main goal of the research within the framework of the PhD
thesis is to give the linguistic characteristics of the text type that fairy tale
belongs to in general, with the presentation of the three nations' folktales as
subtypes of this text type. **The material of the analysis** comprises Armenian,
Russian and English folk tales based on the authoritative publications.

The theoretical significance of the research is that the Armenian
fairy tales are described as a text and discourse for the first time as well as
compared with Russian and English fairy tales from the perspective of the
modern text linguistics.

The practical value of the thesis is the possibility to use its results in
the courses in the linguistics of the text, translation theory, contrastive
linguistics and folkloristics.

The thesis consists of preface, three chapters, conclusion,
bibliography and an annex presenting the list of the terms of the text linguistics
in the Armenian language.

In the **first chapter** titled "Some Issues of the Text Linguistics" the
main achievements of the relatively young academic discipline – text linguistics
- are presented. We have analysed the fundamental works by leading Russian
linguists (I. Galperin, V. Lukin, N. Belova, V. Toporov, T. Nikolaeva, V.

Chernyavskaya, etc.) where the main concepts and categories of the discipline have been worked out. In the highlight are the efforts to give the definition of the concept of text during which the categories of textuality have been identified, particularly the category of semantic autonomy (Galperin, Lukin). The basis for the analysis of a fairy tale as a discourse derive from the ideas of a distinguished linguist N. Arutyunova which are presented in the widely known work entitled “Factor adresata” (“The Factor of the Addressee”). These categories are later used in the thesis for the textological analysis and characterisation of the fairy tale.

The **second chapter** – “The Issues of the Definition of a Fairy Tale” – is the textological analysis of the fairy tale. The basis of this chapter is the category suggested by V. Lukin called “text signs”. Using this category Lukin means semantic autonomy, title, intertextuality, meta-text, epigraph, anagram. We have chosen several of these which we consider to be more significant for the fairy tale as a special type of a text – title, intertextuality, meta-text. We have also added one more text sign – the so called marker (markers have been suggested as uninterpretable text organisers by Y. Naida and Ch. Tiber). The markers have been divided by us into two groups: markers of the beginning/end and markers of the internal links. The markers of the both groups have been analysed systematically. We have outlined and presented both their semantics and functional characteristics. From our point of view all the text signs of fairy tales are multifunctional and are closely interconnected.

We have used Bakhtin’s world famous concept called “chronotop” as an additional approach which determines the features of this type of a text. It is obvious that the distance-time of a fairy tale has some unique peculiarities particularly so called “multiworldness”, therefore the links between the boundaries, between these different worlds and very important for the fairy tale.

The **third chapter** is titled “The Fairy Tale as a Discourse (the roles of narrator and narratee)”. In this chapter with the use of the classifications of narrators and narratees (developed in the German school of narratology in Hamburg) we have analysed the types of narrators and narratees of a fairy tale and found out the following: the narrator of a fairy tale can be a) undiegetic, b) implicit c) hesitating between the narrator with limited knowledge and the omniscience (all-knowing) one. The degree of the outlining of the narrator obviously correlates with the determination of the narratee. In the fairy tales first-person, second-person and third-person narrations are also used.

The **conclusion** presents the main results of the research.

